փառակը գործ դնելով անխնայ յառաջ տանել ձեր զաւակները բարոյական և մտաւորական կրթութեան մէջ. գուցէ ուրիշները յետոյ կ'օգնեն, բայց մինչև նորանց օգնելը դուք կ'կորցնէք ձեր զաւակների լաւ դաստիարակուելու գեղեցիկ օրերը, ուսի ժամանակները, որը կրկին ձեռք բերելը ամենևին անկարելի է։ Մի սեպուհ պարտաւորութեան ասկից դուրս գալու համար՝ մեր կողմից այսպէս խորհուրդ տալով՝ յարգելի ժողովըդ՝ կ'առաջարկենք այս տեղ նոր 'ի նորոյ աշակերտներ ընդունելու համար մի քանի յօդուածներ՝ յատկապէս նորանց յառաջադէմ կացուցանելու՝ և դպրոցի փառք ու պատիւը բարձրացնելու՝ աշխատելով նորան այգին չ'մշակող, ու միայն հեռու կանգնած պտուղ պահանջող մարդկանց նըման տրտունջ բարձողներից։

ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ ՍՐԱՆՔ ԵՆ

1) Դպրոցի մէջ կուսանին թոշակատու և ձրիավարժ աշակերտք։

2) Իւրաքանչիւր աշակերտի տարեկան թոշակը կ'լինի երեսուն, քսան և տասն մանէթ՝ առաջին, երկրորդ և երրորդ կարգի կարողութեան տէր մարդկերից, և այն կ'առացուի տարին երկու անգամ։

3) Ձրիավարժների թիւը քսանից չի պէտք է աւելանայ, որոնք կ'լինին վկայեալ աղքատ և որբ երեխաններից։

4) Բոլոր աշակերտք կ'ընդունուին խնդրագրութեամբ, որ կ'լինի Փոխանորդի անունով, թոշակատուքը վեց ամսուանը կանխիկ վճարելով։

5) Աշակերտները կ'ընդունուին դպրոցը ութ տարեկանից մինչև տասնևմէկը. իսկ հասակով մեծերը ուսուցչաց քննութեան յարմար գտնելուց յետոյ՝ կարող են ընդունուիլ վերին դասատուն։

6) Եթէ մի աշակերտ ծուլութեան պատճառաւ չ'կարողանայ փոխել գոնէ երկու տարին մի դասատուն, կարտաքսուի դպրոցից զրկուելով տուած թոշակագրամից։

7) Բոլոր աշակերտք ուսման ժամանակ պէտք է ներկայ գտնուին դպրոցում. ոչինչ պատճառ օրինաւոր չի կարող համարուիլ՝ բաց 'ի հիւանդութիւնը, և այն ծնողք կամ ազգականք պարտաւոր են յայտնել վերակացուին առաջին օրից։

8) Ծնողք բաց 'ի հեռաւոր քաղաք ուղարկելուց՝ ուրիշ պատճառաւ չ'պէտք է հանեն իւրանց որդիքը դպրոցից՝ ուսման ընթացքը չ'աւարտած. իսկ եթէ մէկը վեց ամսով կամ մի տարով է ուզում իւր որդին թողնի՝ [illegible] գրել իմանալու համար, կարող է ուրիշ մասնաւոր տեղերում ձեռք բերել ուզած գիտութիւնը՝ չ'դիպչելով Հոգևոր Դպրոցի պատւոյն։

9) Աշակերտաց ընդունելութիւնը տարին միանգամ կ'լինի՝ սկսած օգոստոսի քսանից մինչև սեպտեմբերի տասը։

10) Ուսումից ազատ օրերը յայտնուած են դըպրոցի կանոնադրութեան մէջ. այն տեղ կարելի է տեսնել նոյնպէս ուսանելի առարկաները, որն որ տպուած է Արարատ ամսագրի մէջ։

11) Տարին միանգամ հրապարակական հարցաքննութիւնից յետոյ՝ արժանաւորքը կ'փոխադրուին վերին դասատուն։

12) Դասատան գրքերը ուսուցչաց ընտրութեամբ կ'առնայ ուսումնարանը և այն տեղից կ'վաճառուի աշակերտաց՝ մանէթին 10 կոպէկ դպրոցի օգուտը պահպանել.

13) Շաբաթը միանգամ ուսուցչական ժողով կ'լինի դպրոցի մի որոշ սենեակում. դաստիարակութեան առարկաների վերայ խորհուրդ առնելու համար Փոխ.-Թեմակալի նախագահութեամբ։

14) Ուսման ընթացքը աւարտող աշակերտները կարձակուին օրինաւոր վկայաթղթով դըպրոցի կնքով դրոշմած։

15) Մէկ ծնող կամ ազգական՝ որ կամենայ առանց զօրաւոր պատճառի մի աշակերտի ուսման ընթացքը չաւարտած հանել դպրոցից՝ ուրիշ դպրոց տալ, և կամ ուրիշ արհեստի, պարտական է տուգանք տալ դպրոցին այնքան դրամ, որքան այն աշակերտի մի տարեկան թոշակագրամն է։

Դ Ա Շ Ա Ն Ց Թ Ո Ւ Ղ Թ

Ի թղթին դաշանց գրի, "Նա և առաւել ընծայեցաք ընծայս բաղումս ընծանեաց սուրբ Կոստանդիանոսին և Տրդատայ վերնակրօն եղբարցն և սուրբ հօրն Գեոնդեայ": Ըստ միաձայն պատմութեան Հայոց՝ խաչն Տրդատայ դաշանց եղև 'ի 653 ամի Տեառն, ուր և շինեցաւ Վանք մեծ և եկեղեցի. և չէ՞ արդեօք հակառակ ամենայն ճշմարտութեան՝ ընծայել ուխտին ընծայս 'ի սկիզբն չորրորդի դարուն, որ զգոյութիւնն կամ զհաստատութիւնն ընկալաւ երեք և կէս դարուք զկնի:

Թողեց զայլ ամենայն այլանդակութիւնս շարագրածոյ և ածոյ թղթոյն դա-

շանց։ Ինմա 'ի կիր արկեալ են բազում բառք օտարազգիք, որպէս Գրէր, Օքսոնական, Գուլէս, Պռոտոն, Օնանթեա եւ զիզակս, Ա Էզէնդակաց, Զեղափանդական, Գոմոնական, Պռոտապոյս, Օֆրանթէի, եւայլն։ զայսոսիկ բառս պարտ է քննել համեմատութեամբ շարադրածոց այնր դարու 'ի Լատին լեզու, և տեսանել՝ թէ 'ի կիր արկեա՞լ են 'ի նոսա այնոքիկ, և յայնժամ յայտ յանդիման երևի ճշմարտութիւնն։ Ասա յայսցանէ՝ ոմանց կարծիք է, թէ պատմութիւնն Ագաթանգեղեայ ընդ որում և Թուղթն դաշանց Թարգմանեալ է 'ի Յունականէն 'ի Հայ լեզու 'ի մեծաց Թարգմանչաց մերոց, սակայն ճշգիւ քննեալ և համեմատեալ զԹարգմանութիւն Թղթոյն դաշանց ընդ այլոց Թարգմանութեանց և շարադրածոց նախնի Թարգմանչաց զտանեմ զգալի տարբերութիւնս, ո՛չ միայն յոճ շարադրութեանն, այլ և 'ի վերջնումն 'ի կիր արկեալ են այնպիսի բառք՝ որոց նշմարանք անդ մ չերևին 'ի նախնի մատենագրութիւնս, զորօրինակ՝ զՍաղաստան և զԴելմաստան ցուցանել լինել ընդ իշխանութեամբ արքային Ազուանից, այլ ըստ իսկութեան Սաղաստան է 'ի Պարսս՝ անդր քան զԱսպահան, իսկ Դելմաստան չիք ուրեք բնաւ։

Ասհուանդ բառ անծանօթ, Անջախ բառ Արաբացւոց բնաւ չ'արկեալ 'ի կիր 'ի նախնի մատենագրութիւնս, 'ի մեզ զրի՝ Դրոշ, դրոշակ, վառ եւն. Ասղոք, բառ անծանօթ։ Ի կարգի ընծայիցն՝ Եռու՝ ասէ, և Ապարոշ սրբոյ սեղանոյն, Ապարոշ նշանակէ վարջամակ ազնիւ գառեալ զգլխով արանց կամ կանանց, (Տաճ, Սարբդ, Պարբսի, Սերպէտ) Ազիտեմ, զոր 'ի զարդուց սրբոյ սեղանոյն նշանակէ Ապարոշն. զի սուրբ սեղանք եկեղեցեաց Հայոց չեն ունեցեալ և չունին բնաւ զԱպարոշ։ Եւ յայնմ Թղթի և այլ այսպիսի բազում բառք անյարմարքք, զորովք զանց առնեմ 'ի համառօտութեան սակս։ Եթէ աշխարհագրական քննութեամբ 'ի կշիռ արկիցս զանուանս քաղաքաց, գաւառաց և վայրաց յիշատակելոց 'ի Թղթին դաշանց, իսկոյն երևի թէ յօրինող նորին կամ սպրդօղն զյաւելուածս՝ է խարդախ ոմն տգէտ՝ ըստ որում զքաղաքս և զգաւառս եղեալ է՝ ո՛չ ըստ աշխարհագրութեան չորրորդի դարուն, այլ ըստ սահմանաց բաժանելոց յետոյ քան զութերրորդ դարն. զորս թողում յիշատակել մի առ մի։

Որպէս յառաջագոյն ասացի՝ վկայութիւնք յառաջ բերեալք 'ի տետրակի անդ՝ յԱգաթանգեղեայ, 'ի Շնորհալւոյն, 'ի Ա Դրդանիսէ, յԵղիշեայ և յայլոց՝ ցուցանեն միայն, թէ եղեալ է դաշն ընդ միջ մերոյն Տրդատայ և կայսերն Կոստանդեայ. թերևս էին և այլ Թուղթք դաշանց նախնի թագաւորաց մերոց ընդ պետութեան Հռովմայեցւոց՝ նաև նախ քան զտարածանել քրիստոնէութեան, այլ 'ի նոյն վկայութիւնս չերևի բնաւ դաշինք Լուսաւորչին ընդ Սեղբեսարոսի յազգս եկեղեցական իրաւանց և արտօնութեանց։ Եւ եթէ եղեալ իսկ է այն Թուղթն դաշանց 'ի միջ երկուց արքայից, որպէս ինձ թուի, այն վերջանայ 'ի բանն Կոստանդեայ Կայսեր, որ զկնի քաղաքական դաշնաւորութեանց ուղղելով զբանն առ ազգս և ժողովուրդս յանձն եղեալս իշխանութեան մերոյն Տրդատայ՝ կնքէ," Եւ ժողովեցարուք անհուն բազմութիւն իրրև

զաւազ առ ափն ծովու՝ յաղագս պահակէին Հռոմայ Պուպիանոսայ և Պալբինեայ, զի և զնոսա 'ի մեծն Տրդատ փոխահացայ: Ողջ լերո՛ւք մերով ողջունելովս,,. այս էր եղանակ վերջարանի նախնեաց, որպէս յայտ է յամենայն թուղթս գրեալս 'ի Կայսերաց Հռովմայեցւոց, Յունաց նաև Պարսից. իսկ որ ինչ յաւելուած է յետ այսորիկ՝ կամ նոր յօրինած է՝ կամ ընդ բազում այլայլութեամբ անկեալ:

Ի վախճան համառօտ ծանօթութեանցս ոչ աւելորդ համարիմ յարակցել, թէ չ'գիտեմ, զի՞նչ մեծագոյն փառք են մեզ, եթէ սուրբն Գրիգոր ընկալեալ իցէ զիւրն իշխանութիւն 'ի Հայրապետէն Հռովմայ, և թէ՝ եկեղեցիք քրիստոնէից՝ ընդ որս և եկեղեցին Հայոց՝ պարտի լինել ընդ նորայն դաստիարակութեամբ՝ իբրու հզօր հրամանահանի յընդհանուր եկեղեցիս քրիստոնէից. մեք ընդունիմք, հաւատամք և պատմաբանական փաստիւք հաստատեմք, թէ՝ Հայրապետք Հայոց եկեղեցւոյ ունէին զիւրեանց իշխանութիւն անընդմիջաբար 'ի Փրկչէն մերմէ Յիսուսէ 'ի ձեռն Առաքելոյն Թադէոսի և յաջորդաց նորա: Եկեղեցին Հայոց չէ և չէ երբէք անկեալ ընդ իրաւասացութեամբ այլոց եկեղեցեաց, և չունի երբէք մտանել. այլ թէ ըստ ժամանակին պիտոյից և ըստ քաղաքական հանգամանաց կեղծաւորեալ են ոմանք, այն չէ մեզ ընդունելի:

Չգիտեմ, ընդէ՞ր է մեզ անձամբ արկանել զանձինս ընդ ծայրագոյն դատապարտութեամբ. սարսափիմ՝ յորժամ ընթեռնում 'ի թղթին դաշանց, ուր յետ բազմաց սարսափելի երդմանց՝ ասէ, զարիւնըն Յիսուսի խառնեալ 'ի մելանս կնքեցին զայն թուղթ՝ Կոստանդիանոս և Տրդատ թագաւորք, սուրբն Սեղբեստրոս և Գրիգոր Լուսաւորիչն մեր. եթէ այս այսպէս եղեալ իցէ, տխրապէս, ընդ դատապարտութեամբ են նախնիք մեր, ընդ դատապարտութեամբ եմք և մեք, զի ոչ հնազանդիմք կամաց և հրամանաց հզօր հրամանահին յընդհանուր եկեղեցիս քրիստոնէից. խոստովանիլ զաւագութիւն թղթոյն դաշանց՝ է խոստովանիլ զՀայրապետս Հռովմայ՝ տէր և իշխան և հզօր հրամանահան յընդհանուր եկեղեցիս քրիստոնէից, 'ի հարկէ և Հայոց. որ ողբալի իմն է. զի ըստ անստերիւր կանոնաց՝ յետ ընդունելոյ ըզթուղթն դաշանց՝ առաջիկայ մեզ կա՛մ զանուն քրիստոնէութեան մերկանալ, կամ հնազանդիլ իշխանութեան հզօր հրամանահանին յընդհանուր եկեղեցիս քրիստոնէից:

Հայրապե՛տ մեծ, եթէ Հռովմէական ոք կամ նոյն ինքն Հայրապետն Հռովմայ պընդել ջանայր զհաստատութիւն թղթոյն դաշանց, Զեզ և մեզ, մանաւանդ Զեզ արժան էր ամենայն զինու զօրութեամբ ջանալ հերքել զայն, թո՛ղ թէ ինքնին անձամբ արկանել զազատ իրաւունս ազգիս ընդ իշխանութեամբ եօթնագլխեան վիշապին, յորմէ նորին իսկ բազմադարեան հպատակք զարհուրեալ փախչին: Ա՛յս է ահա իմ համոզումն մտաց 'ի վերայ անվաւերականութեան թղթոյն դաշանց, զոր պարզութեամբ առաջի արարի 'ի կարճոյ՝ թողով զընդարձակն այլում ժամանակի և հարկի:

Երկրորդ՝ դարձցո՛ւք այժմ 'ի զննութիւն տեսակին 'ի վերայ հրաշագործ մասանց սրբոց:

Ընդհանրապէս խօսելով, ամենայն փառք և վկայութիւնք յառաջ բերեալք 'ի նմին՝ են անյեղլի ճշմարտութիւնք և 'ի բազմաց աստուածաբանից Լատինաց, Յունաց և Հայոց վկայեալք, մանաւանդ 'ի չորեքտասաներրորդ դարէ այսր. այլ 'ի կարգի շարադրածոյն են անյարմարութիւնք ոմանք, յորոց զոմանս մատնանշանակեցի յեղելս նոյն իսկ տետրակին, և զայլս՝ որք կարօտք էին բացատրութեան՝ նշանակեմ աստանօր ըստ կարգի իւրաքանչիւր երեսաց տետրակին: Երես Է. վասն զի զի՞նչ օգուտ է հաւատալ ամենակարող զօրութեանն Աստուծոյ:

Թէպէտ ըստ անզգուշութեան արտագրողաց՝ թողեալ է եղծակցութիւնն, և գործով ոչ կատարել զկամս նորա և ըզհրամանս: Երես 5. և կարի իսկ քաջ, քանզի փոխանակ աներկբայ հաւատոյ յԱստուածային ամենակարող հրաշագործութիւնս՝ երկրայել ընդ այնս և թերահաւատիլն՝ ոչ ապաքէն ուրանալ է զԱստուածային կարողութիւնն:

Յայսմ պարբերութեան բառքդ և կարի իսկ քաջ՝ չէ յայտ, թէ առ ինչ և առ ով վերաբերի: Երկրայել և թերահաւատիլն ոչ երբէք կարեն նոյն լինել ընդ ուրացութեան. նշանակութիւնք բառիցդ յայտնի են յաւուրց անտի սկզբնաւորութեան քրիստոնէական կրօնի՝ ծնան յեկեղեցւոջ երկրայութիւնք, ելին և թերահաւատք, սակայն նոքա չհամարեցան ընդ անհաւատս, քննեցան կարծիք նոցա 'ի մասնաւոր և յընդհանուր ժողովս. ծանուցան նոցին սխալանք. բայց յամառեալքն յիւրեանց թիւր կարծիս՝ ընկալան զանուն հերետիկոսի կամ հերձուածողի՝ և ոչ անհաւատի. և զի՞արդ մարթ է կոչել զքեզ ուրացող՝ որ ընդունիս զամենայն մասունս հաւատոյ, որ քրիստոնեայ ես, սակայն կամ տգիտութեամբ կամ յամառութեամբ ոչ թէ ուրանաս զամենակարողութիւնն Աստուծոյ, այլ չընդունիս զզօրութիւն հրաշից եղելոց 'ի ձեռն սրբոց մասանց:

Երես 7. գիտեմ, արհամարհել ունին խօթամիտք և թերահաւատք զայն ամենայն խոստովանութիւնս՝ որք վերաբերին առ ամենակարող զօրութիւնն Աստուծոյ: Յայսմ բանի բառքդ "Աստուածային խոստովանութիւն" որպէս ինձ թուի՝ չեն եդեալ ըստ բուն նշանակութեան իւրեանց. թերևս պարտ էր ասել զԱստուածային ստորոգելիս կամ զյատկութիւնս, որք վերաբերին առ ամենակարող զօրութիւնն Աստուծոյ: Չ'գիտեմ, թէ գոն յաշխարհի մարդիկ, որք հաւատայցեն՝ թէ գոյ Աստուած, և արհամարհեցին զամենակարողութեամբ նորա. հեթանոսք անգամ երկրպագուք կուոց 'ի բնական կամ յարհեստական Աստուածս իւրեանց ցուցանել ջանային զամենակարողութիւն, թող թէ Աստուածապաշտք նաև Քրիստոնեայք. այո՛ ոմանք արհամարհեն զլինելութեամբ հրաշից և սքանչելեաց, սակայն չիք՝ որ ասիցէ թէ՝ չէր և չէ կարող Աստուած առնել զայնպիսիս, այլ ըստ թիւր կարծեաց իւրեանց պնդեն, թէ արտաքոյ բնական կարգի չառնէ ինչ Աստուած, կամ զայլ այսպիսի մոլորամիտ պատճառս բերեն ընդ առաջ: Երես 3.— սակայն ոչ այնքան փութամ աստանօր ամօթապարտ կացուցանել զյամառեալս 'ի թերահաւատութեան . . . որքան ջանամ յաւէտ զտկարամիտս զգուշացուցանել ևն:

Զ'գիտեմ, իրաւացի՞ է արդեօք զծանր ախտիւք վարակելովք զանց առնել՝ ըզթեթև հիւանդաց միայն հոգալ. գործ է զյամառեալս 'ի թերահաւատութեան ոչ միայն ամօթապարտ կացուցանել, այլ և ջանալ կակղել զյամառութիւն խորհրդոց նոցա՝ Աստուածային գրոց վարդապետութեամբ. ոչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. որչափ զօրաւոր իցեն ախտք, զօրաւորաց և կարօտին դեղոց. «ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս»: Սամարացին չարար անտես զկիսամահ վիրաւորեցելովն, այլ զամենայն հնարս փրկութեան նորա ընձեռեաց. և եթէ Հայաստանեան եկեղեցւոյ չկամի ոչ միայն հոգալ զուղղութենէ յամառելոց, այլ և ամօթապարտ զնոսա կացուցանել անգամ չառնու յանձն, չգիտեմ՝ ո՞ այլ խնամ տանելոց է նոցա. վասնզի գովութեան արժանաւոր այն բժիշկ է, որ զանյուսացեալ հիւանդն յանձն առնու բժշկել (Սարգիս շնորհալի երես 287). և ըստ այսօրինակ պատճառանաց, զայս հաստուած բանի պարտ է յայլ իմն եղանակ ածել:

Ի փախճան համառօտ տեսութեանս յաղագս տետրակին 'ի վերայ հրաշագործմանանց սրբոց՝ յաւելում և զայս, թէ՝ այս տետրակ վասն Հայոց Ռուսաստանի ոչ միայն աւելորդ է, այլ և վտանգաւոր. առ մեզ չէ՛ք երբէ՛ք խնդիր վասն այդր տարակայի. մեք ընդունիմք զհրաշագործութիւնս եղեալս միջնորդութեամբ մասանց սրբոց. ժողովուրդք մեր յանչափս ջերմեռանդ են 'ի յարգութիւն սրբազան նշխարաց, ապա ուրեմն տարածանել ուրեք ըզգեղ ապաքինիչ անգոյ ախտի, է յարուցանել զհետաքրքրութիւն վնասակար:

Իսկ եթէ կարեւոր համարիք զայն վասն Հայոց Օսմանեան տէրութեան, որոց վիճակ քաջայայտ է Ձեզ, զայն դուք գիտէք:

Եզրակեմ՝ ընկալարո՛ւք զբանս իմ իբրև զծնունդ որդիական սիրոյ և մի՛ յանդուգըն հոգւոյ պտուղ:

Որով եմ և Ձեր մեծի Քահանայապետիդ միշտ պատրաստական և մտերմագոյն ծառայ

Յակոբ Կարենեանց

Ի 26-ն Սեպտ. 1859 ամի:

Ի ՏՓԽԻՍ:

~~~~~~~~

Խմբագրո—[illegible] պատասխան Արարատայ

Անցեալ 1869 թուի Արարատ ամսագրոյ սեպտեմբեր ամսոյ տետրակի մէջ՝ մեր ստորագրութեամբ հրատարակուած է մի յօդուած, որ հաղորդում էր ընթերցասէր Ազգայնոց մի քանի տեղեկութիւնք քաղաքիս Ազգային—Հոգևոր ուսումնարանի՝ Հայկական Ընթերցարանի՝ Որբախնամ Ընկերութեան, և այլ երկու ընկերութեանց վերաբերութեամբ. այժմ զանց առնելով վերջին ընկերութեանց մասին խօսել, որովհետև գրեթէ միևնոյն դրութեան մէջ կան, կամենում եմ յիշեալ ուսումնարանի՝ Ընթերցարանի և Որբախնամ ընկերութեան սոյն այս տարւոյ մէջ կրած կերպարանափոխութեանց՝ և ցոյց տուած արդիւնաւորութեանց նկատմամբ հետևեալ տեղեկութիւններն հաղորդել 'ի լուր սիրելի ազգայնոցս միջոցաւ՝ Արարատ պատուական ամսագրոյ, մեծայոյս լինելով՝ թէ որպէս ազգային կարևոր տեղեկութիւնք անշուշտ պէտք է ընդունելութիւն գտնեն դորա մէջ:

Նախ սկսենք ուսումնարանից. որոյ անցեալ կեանքին տեղեկանալու ցանկացողը կարող է քաղել վերոյիշեալ յօդուածից. իսկ ներկայի մասին կարելի է ասել, որ այս տարի այժմեան Հոգաբարձութեան շնորհիւ՝ ուսումնարանը մի քանի
~~~~~~~~